

Եկամուտների բաշխման անհավասարության հաղթահարման մոդելավորումը

Աղքատության մեղմացման ռազմավարական ծրագրի¹ համաձայն՝ տնտեսական աճը Հայաստանում կղզիացած է և կենտրոնացած մի քանի զարգացող ոլորտներում, որոնք հիմնված են կա՛մ դրամաշնորհային տիպի ներդրումների, կա՛մ արտոնյալ վարկերի, ներմուծման փոխարինողների, կա՛մ ներմուծված հումքի վերամշակման արդյունքների արտահանման վրա: Մյուս ուռճացված է և վատ է վարձատրվում սոցիալական ենթակառուցվածքը, ինչը ոլորտի պահպանման համար նախատեսված բյուջետային ծախսերի սակավության պատճառով հնարավորություն չի տալիս ավելացնել այս ոլորտում զբաղված աշխատողների վարձատրությունը: Դրա հետևանքով աշխատանքի շուկայում առաջանում են անհավասար եկամուտներով խմբեր: Առաջանում են առաջնային՝ «լավ աշխատատեղերով» և երկրորդական՝ «վատ աշխատատեղերով» խմբեր: Խոսքը այն երևույթի մասին է, երբ նույն որակավորումն ունեցող մասնագետները, աշխատելով վերոհիշյալ հատվածներում և կատարելով նույնատիպ աշխատանք, ստանում են տարբեր աշխատավարձ: Խնդիրը նոր չէ, և դրա ուսումնասիրությանն են նվիրված բազմաթիվ աշխատություններ²: Մեզ համար առավել ուշագրավ են այն աշխատությունները³, որտեղ դիտարկվում են աշխատաշուկայի մոդելներ, որոնց հատուկ են ցածր ներդրումային մակարդակ և արհմիությունների թույլ դեր՝ հանրապետության ներկայիս իրավիճակին առավելագույնս մոտ լինելու պատճառով: Ընդհանրացնելով վերոհիշյալ ուսումնասիրությունների մեջ արժարժվող հիմնական գաղափարները՝ ներկայացնենք մոդել, որը հնարավորինս համապատասխանեցված է հայաստանյան աշխատաշուկայի բնութագրին (գործազրկության բարձր մակարդակ, ցածր աշխատավարձ և թույլ արհմիություններ):

Նախ՝ տնտեսության մեջ պայմանականորեն առանձնացնենք աշխատաշուկայի երկու հատված՝ կապիտալատար «առաջնային հատված» և աշխատատար «երկրորդական հատված», ենթադրելով որ առաջնային հատվածում աշխատող մասնագետը հատվածի կապիտալատարության շնորհիվ ստանում է ավելի բարձր աշխատավարձ, քան երկրորդական հատվածում զբաղված աշխատողը, որը ներդրումների բացակայության կամ սահմանափակության

¹ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան 2003, էջ 27

² Խնդրի ամենավերջին ուսումնասիրություններից են. Altenburg, Lutz and Martin Straub (2001). Taxes on labour and unemployment in a shirking model with bargaining. Labour Economics 8, 721-744.; Fuest, Clemens and Bernd Huber (2000). Is employment really good for employment? Labour Economics 7, 79-93 և այլն

³ Lambert, Peter J. The distribution and redistribution of income: a mathematical analysis. Manchester University Press, Manchester, 2003; Kleven, Henrik Jacobsen and Peter Birch Sørensen. Labour tax reform, the good jobs and the bad jobs. Manuscript, University of Copenhagen 1999 և այլն:

պատճառով, ստանում է առաջինից զգալիորեն ցածր: Այսինքն՝ առաջնային հատվածի բնականոն գործունեության համար պահանջվում են մեծ կապիտալ ներդրումներ և աշխատուժ, մինչդեռ երկրորդային հատվածի հիմնական շարժիչ ուժն աշխատուժն է: Ընդ որում, աշխատուժի համարժեքության պայմաններում հատվածների միջև աշխատուժի բաժանումը կատարվում է պատահականորեն: Նկատի ունենալով առաջնային հատվածում ներդրումների մեծության և աշխատուժի պահանջարկի միջև գոյություն ունեցող որոշակի կախվածությունը՝ աշխատուժի պահանջարկը (Ω) կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$\Omega = \frac{1}{\lambda} K \quad (1)$$

որտեղ K -ն առաջնային հատվածում ներդրումների չափն է, λ -ն՝ արտադրության կապիտալատարության աստիճանը:

Առաջնային հատվածում աշխատավարձի s_1 մակարդակը որոշվում է աշխատողների և գործատուների միջև կնքված համաձայնագրի հիման վրա: Չարգացած արհեստակցական միությունների, ինչպես նաև աշխատաշուկայում աշխատուժի մեծ պահանջարկի առկայության դեպքում այդ մեծության վրա կարող են ազդել նաև այլ գործոններ, սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս մոդելում հաշվի չի առնվում արհմիությունների ազդեցությունը: Երկրորդային հատվածում աշխատողների աշխատավարձի մեծությունը նշանակենք s_2 :

Աշխատուժի առաջարկը առաջնային հատվածում ճկուն է, քանի որ այս հատվածի գործատուների կողմից աշխատաժամանակը ֆիքսվում է մինչ աշխատանքային համաձայնագրի կնքումը՝ հակառակ դեպքում աշխատողները⁴, նախապես համաձայնեցնելով ժամավճարի չափը, կընտրեն իրենց ցանկալի ծանրաբեռնվածությունը: Այս պարագայում կառաջանա աշխատուժի առաջարկի ավելցուկ, քանի որ շատերը կցանկանան աշխատել շատ՝ ավելի մեծ գումար վաստակելու համար:

Նկատի ունենալով եկամուտների և կապիտալի սահմանային արդյունքի միջև առկա գծային կախվածությունը, առաջնային հատվածում տնտեսավարող գործատուի շահույթը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\Pi = \delta K - s_1 \Omega \quad (2)$$

⁴ Խոսքը վերաբերում է այն աշխատատեղերին, որտեղ գործում է ժամավճարային համակարգ, քանի որ ֆիքսված աշխատաժամանակով աշխատատեղերի դեպքում նման խնդիր չի առաջանում :

որտեղ.

Π -ն գործատուի շահույթն է, δ -ն՝ կապիտալի սահմանային արդյունքը, s_1 -ը՝ առաջնային հատվածում աշխատողների աշխատավարձը, Ω -ն՝ առաջնային հատվածում աշխատողների թիվը:

Ենթադրելով Նեշի հավասարակշռության առկայությունը, արհմիությունների ազդեցությունը բանակցային գործընթացի վրա նշանակենք α -ով ($\alpha \in [0,1]$): Քանի որ առաջին հատվածում զբաղվածների աշխատավարձի մեծությունը ավելի մեծ է քան երկրորդայինում աշխատողներինը, տրամաբանական է, որ առաջնային հատվածի աշխատողները միշտ կարող են ստանալ s_2 աշխատավարձ, սակայն դա կլինի նրանց համար աշխատավարձի նվազագույն մակարդակ: Գործատու ձեռնարկության համար աշխատակիցների աշխատավարձի նվազագույն չափը, բնականաբար, թույլատրելի նվազագույն աշխատավարձն է: Նշանակելով աշխատավարձի հարկման սահմանային մեծությունը τ -ով՝ առաջնային հատվածի աշխատավարձի մեծությունը կարող է տալ հետևյալ խնդրի լուծումը.

$$\max_{s_1} \alpha \ln\{(s_1 - s_2)(1 - \tau)\} + (1 - \alpha) \ln\{\delta K - s_1 \Omega\} \quad (3)$$

որից բխում է

$$s_1 = s_2 + \alpha(\delta\lambda - s_2) \quad (4)$$

և

$$\Pi = (1 - \alpha)(\delta K - s_2 \Omega) \quad (5)$$

Հավասարակշռված \tilde{s} աշխատավարձը տրված նվազագույն աշխատավարձով և առաջնային հատվածում աշխատուժի բարձր արտադրողականության միջոցով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\tilde{s} = \delta\lambda - s_2 \quad (6)$$

Ակնհայտ է նաև, որ

$$\delta\lambda > s_2 \quad (7)$$

Եթե չհարկված աշխատավարձի մեծությունը կախված չէ հարկերի չափից, ապա չհարկվող եկամտի միջին չափի որոշման համար կարելի է կիրառել հետևյալ բանաձևը.

$$\bar{s} = \Omega s_1 + (1 - \Omega) s_2 \quad (8)$$

որտեղ \bar{s} -ը չհարկված եկամտի չափն է, իսկ ընդհանուր աշխատուժի չափը նորմալիզացված է 1-ի:

Հաշվի առնելով որ ներկայումս արհմիությունների դերը բավականին փոքր է և դրանք համարյա չեն ազդում աշխատաշուկայի կարգավորման վրա, որի հետևանքով այնտեղ զգալի է աշխատուժի ավելցուկը, տրամաբանական է, որ այժմ գործատուները կարող են վարձել իրենց աշխատակիցներին s_2 աշխատավարձով: Ներկայումս բացառություն են կազմում միայն միջազգային կապիտալի մասնակցությամբ գործող կամ միջազգային այլ կազմակերպությունները, որոնք ունեն տարիֆային մշակված համակարգեր, և աշխատանքի վարձատրությունը կատարվում է դրանց համաձայն: Թեև աշխատաշուկայում տիրող իրավիճակը չի կարող իր ազդեցությունը չունենալ նաև այս դեպքում: Անհավասարության մեղմացմանն ուղղված ջանքերի արդյունավետության գնահատման համար դիտարկենք հետևյալ պարզ բարեկեցության ֆունկցիան⁵

$$W = \tilde{s}(1 - \mu G) \quad (9)$$

որտեղ

μ - անհավասարության մեղմացման շահագրգռվածությունն է ($\mu \in [0;1)$), \tilde{s} -ը՝ միջին հարկված եկամուտը, որը ներկայացվում է հետևյալ բանաձևով.

$$\tilde{s} = \bar{s}(1 - \tau) + \beta \quad (10)$$

որտեղ β -ն վերաբաշխվող եկամտի չափն է:

Իրականացվող միջոցառումների գնահատման չափանիշ ընդունենք Ջինիի եկամուտների անհավասար բաշխման ստանդարտ գործակիցը՝ $G \in [0,1]$: Այն կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$G = \frac{\Omega(1 - \Omega)(s_1 - s_2)(1 - \tau)}{\tilde{s}} \quad (11)$$

⁵ Այս տիպի ֆունկցիա առաջին անգամ ներկայացվել է Լամբերտի կողմից (Lambert, Peter J. The distribution and redistribution of income: a mathematical analysis. Manchester University Press, 23 Manchester. 1993): Վիճակագրական տվյալների օգտագործմամբ Ամիելը (Amiel, Yoram, John Creedy and Stan Hurn (1999). Measuring attitudes towards inequality. Scandinavian Journal of Economics 101, 83-96) ապացուցել է, որ այն առավել ճշգրտորեն է արտահայտում անհատական անհավասարությունները քան հաստատուն համեմատական անհավասարության և հաստատուն բացարձակ անհավասարության այլ մոդելներ:

Չարկերի և սուբսիդիաների ազդեցությունը բաշխման վրա կարելի է ի հայտ բերել ածանցելով (11) արտահայտությունը ըստ համապատասխան՝ τ և β փոփոխականների.

$$\frac{\partial G}{\partial \tau} = -\frac{\Omega(1-\Omega)(s_1 - s_2)\beta}{\tilde{s}^2} < 0 \quad (12)$$

և

$$\frac{\partial G}{\partial \beta} = -\frac{\Omega(1-\Omega)(s_1 - s_2)(1-\tau)}{\tilde{s}^2} < 0 \quad (13)$$

Մասնակի ածանցյալների դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ հարկերի⁶ և սուբսիդիաների աճը բերում է եկամտի առավել հավասար բաշխման:

Սակայն սա չի կարող խնդրի լուծում համարվել, քանի որ հարկերի ու սուբսիդիաների մեծության անընդհատ աճի դեպքում մոդելը չի գործի. այն իրենից կներկայացնի միայն պետության կողմից եկամուտների ողջ մեծության հարկում ($\tau=1$) և հավասար վերաբաշխում ($\beta=1$):

Ի վերջո, սոցիալական քաղաքականություն մշակելիս, առաջնային է ոչ թե անհավասարության ձևական մեղմացումը, այլ ընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացումը: Այդ նպատակի համար, որպես լավագույն միջոց, կարելի է կիրառել այսպես կոչված՝ «լավ աշխատանքների» տեսակարար կշռի ավելացման քաղաքականություն: Ենթադրենք \hat{s}_i -ն i -րդ հատվածի աշխատողի հարկված եկամուտն է: Առաջնային հատվածի ընդլայնումն այդ դեպքում եկամուտների բաշխման վրա կարող է ունենալ հետևյալ ազդեցությունը.

$$\frac{\partial G}{\partial \Omega} = -\frac{(\hat{s}_1 - \hat{s}_2)[\hat{s}_1\Omega^2 - \hat{s}_2(1-\Omega)^2]}{\tilde{s}^2} \quad (14)$$

Ինչպես տեսնում ենք, Ջիևի գործակցի վրա դրա ազդեցությունը հաստատուն է և դրական ազդեցություն ունի $\frac{\partial G}{\partial \Omega} < 0$, երբ $\frac{\hat{s}_1}{\hat{s}_2} > \frac{(1-\Omega)^2}{\Omega^2}$: Սա տեղի ունի եթե $\Omega > \frac{1}{2}$,

ինչը նշանակում է, որ առաջնային հատվածի ընդլայնումը բերում է եկամուտների առավել հավասար բաշխման, միայն եթե աշխատողների ավելի քան կեսը աշխատում է այստեղ, կամ եթե հատվածների հարկված եկամուտների տարբերությունը բավականին մեծ է:

⁶ Խոսքը վերաբերում է աճողական (պրոգրեսիվ) հարկմանը:

Առաջնային հատվածի ընդլայնման ազդեցությունը եկամուտների բաշխման հավասարության վրա, ինչպես արդեն նշեցինք, կարելի է լինել և՛ դրական, և՛ բացասական: Այդ հատկությունը ցույց տանք Ջինիի գործակցի օգնությամբ՝ հետևյալ օրինակով. ենթադրենք՝ բոլոր աշխատողները ունեն վատ աշխատանք, միայն մեկին լավ աշխատանք տալով՝ եկամուտների բաշխումը կդառնա անհավասար: Բնականավար, ընդհանրուր կենսամակարդակի վրա դա կազդի դրականորեն: Իսկ եթե բոլոր աշխատողները, բացի մեկից, կունենան լավ աշխատանք, ապա այդ աշխատողին ևս տեղափոխելով առաջնային հատված, ակնհայտորեն կհարթվի եկամուտների բաշխման անհավասարությունը: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, մեկ աշխատողի լավ աշխատանքով ապահովելու դեպքում անգամ կունենանք կենսամակարդակի բարելավում: Դա ներկայացնենք բանաձևով. Ջինիի գործակցի արտահայտությունը ներմուծելով բարեկեցության ֆունկցիայի մեջ, կստանանք.

$$W = (1 - \tau)[\bar{s} - b\Omega(1 - \Omega)(s_1 - s_2)] + \beta \quad (15)$$

Այնուհետև մասնակի ածանցյալների օգնությամբ ցույց տանք, որ առաջնային հատվածի ընդլայնումը դրականորեն է ազդում բարեկեցության վրա՝ հաշվի առնելով (15) արտահայտության մասնակի ածանցյալները.

$$\frac{\partial W}{\partial \Omega} = (\hat{s}_1 - \hat{s}_2)[(1 - b) + 2b\Omega] > 0 \quad (16)$$

$$\frac{\partial^2 W}{\partial \Omega \partial b} = (\hat{s}_1 - \hat{s}_2)(2\Omega - 1) > 0 \quad \text{եթե} \quad L > \frac{1}{2} \quad (17)$$

և

$$\frac{\partial^2 W}{\partial \Omega \partial b} = (\hat{s}_1 - \hat{s}_2)(2\Omega - 1) < 0 \quad \text{եթե} \quad L < \frac{1}{2} \quad (18)$$

Այսպիսով, եկամուտների վերաբաշխմանը զուգընթաց, իրականացնելով առաջնային հատվածի ընդլայնման քաղաքականություն, կարելի է մեղմացնել բաշխման անհավասարությունը: